

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 227-Ա

31 հուլիսի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի 319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի հուլիսի 30-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) «Արձագանք» ՍՊԸ, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տարոն-2 թաղամաս (ՀՎՀՀ 06915527).
- 2) «Ստեփշին» ՍՊԸ, Լոռու մարզ, գ.Գարգառ, Կենտրոնական 1, 1 (ՀՎՀՀ 06948385).
- 3) Ա/Ձ «Սիրվեն Շահբազյան», Լոռու մարզ, գ.Ամրակից, (ՀՎՀՀ 64411723).
- 4) «Ֆլեշ» ՍՊԸ, Լոռու մարզ, ք.Ստեփանավան, Բաղրամյան փող. վերջնամաս (ՀՎՀՀ 01808789).
- 5) Ա/Ձ «Հայկ Զաքարյան», Լոռու մարզ, ք.Ստեփանավան, Բաղրամյան 124/3 (ՀՎՀՀ 82721845).
- 6) Ա/Ձ «Նորայր Սարգսյան», Լոռու մարզ, ք.Տաշիր, Երևանյան 169 (ՀՎՀՀ 66838218).
- 7) Ա/Ձ «Վիտալի Յուսուբով», Լոռու մարզ, ք.Տաշիր, Երևանյան 197 Ա-3 (ՀՎՀՀ 69507064).
- 8) Ա/Ձ «Իրինա Թովմասյան», Լոռու մարզ, ք.Տաշիր, Երևանյան 218 (ՀՎՀՀ 66821171):

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողների գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 31/07/20 14:56:45 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ